ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ.

Տ Ա Ճ Կ Ա Ս Տ Ա Ն

(Բիւզանդիոն)

Զատկի տօնների առիթով Սրբազան պատրիարքը այցելութիւններ է փոխանակել դեսպանների, ընդ որս և յունաց տիեզերական պատրիարքի և քրիստոնեայ հոգևոր պետերի հետ։ Պատրիարքների այցելութիւնը առաջ կատարուում էր նրանց պաշտօնի մէջ մտնելիս, և այցելելով միմեանց՝ մտնում էին եկեղեցին, աղօթում էին, սիրոյ և համերաշխութեան ատենաբանութիւններ էին անում, որ շատ լաւ տպաւորութիւն էր թողնում հայ և յոյն ժողովրդի վերայ։ Այս անգամ յոյն տիեզերական պատրիարքի ցանկութեամբ եկեղեցի մտնելու արարողութիւնը չէ կատարուել և ժողովուրդը զրկուել է այդ մխիթարական հաճոյքից։ Ցունաց Տ. Յովակիմ պատրիարքի կողմից Նորին Երանութեան տարկաւագապետը հայերէն լեզուով հետաքրքիր ճառն է կարդացել։

«Սրբազան եղբայր իմ ի Քս. Ձերդ Սրբազնութեան ազգային և կրօնական երկեակ հանգամանքներով մեզ շնորհած այցելութիւնները փութով փոխարինելով, մեռեալներէն յարութիւն առնող բարձրեալն Աստուծմէ կհայցեմ, որ մեր եղբայր և ուղղափառ հայ ազգն ու Ս. եկեղեցին ամեն տեսակ փորձանքներէն ցմիշտ պահպանէ։ Կմաղթեմ նաև որ Ձերդ Սրբազնութիւնն արժանի ըլլայ դեռ շատ տարիներ վայելել բարեբաղդութեամբ այս տեսակ երջանիկ ու նուիրական օրեր»։

Այս ճառից յետոյ մտերմական խօսակցութեան ժամակ Տ. Յովակիմ պատրիարքի հարցումներին մեր սրբազան պատրիարքը պատասխանել է, որ Թուրքիայում՝ 2 միլիոն, Ռուսիայում՝ $1^1/_2$ միլ. Ամերիկայում՝ 30 հազար հայեր կան. հայեր կան նաև Եւրոպայում, Ասիայում և Ամերիկէում, որոց թիւը ճշտուած չէ. Լեհաստանի հայք

ձուլուել են լեհացիների հետ։ Նորին Երանութիւն Տ. Յովակիմ պատրիարքը յայտնել է, որ Իտալիայում գտնուած յոյներն էլ ձուլուել են։

Տ. Յովակիմ պատրիարքի շնորհակալութեան և հրաժեշտի ողջունին մեր պատրիարքը պատասխանել է.

«Տիեզերական պատրիարքին մեզի ըրած այս այցելութենէն հոգևորապէս հրճուանք զգալով կհամատանք կրկին մեր սէրն իր անձին նկատմամբ և համակրանքն այն ազգին, որուն հետ եղբայրական և հոգևորական կապերով կապուած ենք։ Արդէն ասկէ 1600 տարի առաջ Տրդատ և Կոստանդին թագաւորներն ողջագուրուելով, ուխտեցին պաշտպանել քրիստոնէութիւնը....»։

Ապրիլի 28-ին Խառն ժողովը որոշեց եպիսկոպոսացման վկայական տալ միայն նրանց, որոնց համար տեղական գաւառական ժողովներից խնդիր է եղել։ Այսպէս, եպիսկոպոսական վկայական տրուեց Տիգրանակերտի ամաչնորդ Տ. Զաւէն ծ. վարդապետին, Դաղատիոյ առաջնորդ Տ. Բարգէն ծ. վարդապետին և Կտուց անապատի վանահայր Ստեփան ծ. վարդապետ Աղազադեանին։

Սուլթանը իւր հիւանդութիւնից ապաքինուելու առթիւ բոլոր բարենպատակ հաստատութիւններին նպաստներ է նուիրել, ի միջի այլոց և մեր ազգային հիւանդանոցին 1800 ղուռուշ։

Կրթական նախարարութիւնը յայտնել է, թէ պատրիարքարանի տուած ուսուցչական վկայականները կընդունի իբրև օրինաւոր և կըվաւերացնի, բայց վարժարանների վիճակագրութիւնները պէտք է ամբողջանան և իրան ղրկուեն, որ նրանց արտօնութեան խնդիրն էլ կարգադրուի։

Զինուորական նախարարն էլ պատասխանել է, որ դիաքոնները ոչ թէ հայոց դպիրներն են, այլ սարկաւագները, սակայն Ս. Պատրիարքը բացատրել է, որ հայ դպիրները մասնաւոր տարազ չունեն, հետևաբար դիաքոնները իսկապէս դպիրներն են։ Նախարարը խոստացել է պէտք եղածը գործադրել այս մասին։

Գաւառ.

—Գաւառներէն հասած կրօնափոխութեան դրեր ասկէ առաջ յանձնուած էին Բ. ատենապետ Տոքտ. Մեղբոսեան էֆ.-ի, որ Խառն ժողովոյ վերջին նիստին մէջ իր քննութեանց եզրակացութիւնը հաղորդեց ժողովին։ Տոքտ. Մեղբոսեան էֆ. կըսէ թէ գանգատները քանի մը մասերու կրբաժնուին, այսինքն թէ 14 տարեկան աղջիկներ կրօնափոխ կըլլուին, պարագայ մը որ ճիշտ չէ, որովհետև ըստ Շէրիի թէև 15 տարիքն արբունքի տարիքն է, բայց արբունքն օրինական չափահասութիւն չէ, այլ բնական վիճակը, որ 20 տարին կրնայ ըլլալ, հետևաբար այդ տարիքէն վար եղողներուն գաւանափոխական դիմումները պէտք չէ նկատողութեան առնուին։ Գանգատի երկրորդ կէտն է՝ կրօնափոխ եղողներուն՝ առանց իրենց պատկանած առաջնորդարանը զրկելու, անմիջապէս եղած դիմումին ընդունուիլը, առանց գոնէ քանի մը օր քահանայի մը քով պահուելու, ինչպէս սովորութիւն էր առաջ։

Երրորդ՝ կառավարական պաշտօնատարներ նոյն իսկ բռնապետական շրջանին կրօնափոխութեանց գործերու մէջ շատ զգուշաւոր ընթացք ունէին, մինչդեռ հիմա ազատութիւն ըլլալուն համար ամէն ոք իր խղճին մէջ ազատ է, կըսուի, և այդ կերպով նախկին զգուշութիւններն ի գործ չեն դրուիր։ Չորրորդ՝ կրօնափոխութեանց ծաւալման գլխաւոր պատճառներէն մէկն ալ այն է որ, կրօնափոխութիւնները տեղի կունենան հիմա առևանգութիւններէ յետոյ, այնպէս որ իրենց տունէն հանուող աղջիկներ, յետոյ բռնի կրօնափոխութեան կհրաւիրուին։ Մեղբոսեան էֆ.-ի հանած

այս եղրակացութեան վրայ դիմում պիտի ըլլայ կառավարութեան, խնդրելով որ, կրօնափոխական դէպքերու մէջ մինչև հիմա պահպանուած դրութիւնը շարունակուի գործադրուիլ և առիթ չտրուի գանգատի։

— Ֆէնէսէցիներուն կողմէ պատուիրակութիւն մը ներկայացաւ առջի օր Խառն ժողովին, խնդրելով որ Մեսրոպ Վրդ. մնայ նոյն քաղաքին մէջ։ Ուրիշ դիմումներ և հեռագիրներ ալ կային որ հեռանայ, հանրագրութիւն մ՚ալ մնալուն ի նպաստ պատրաստուած էր։ Ժողովը նկատելով որ այս խնդիրն աւելի լաւ է լուծել պաշտօնական քննութեանց հիման վրայ, քան թէ ժողովրդեան դիմումներով, Կեսարիոյ վարչութեան քննութեան յանձնեց։

Զմիւռնիայի առաջնորդական տեղապահ Տ. Արսէն վարդապետը տկարութեան պատճառով հրաժարուել է։ Առաջադրուել է Զմիւռնիայի տեղական դատական ժողովին առաջնորդական ընտրութիւնը կատարել։ Եռանուն ցանկի մէջ են Գրիգորիս վ. Պալաքեան, Արսէն վարդապետ Վեհունի և Գնէլ վարդապետ Գալէմքերեան։

Ս. Պատրիարքը նորից դիմումն է արել կրթական նախարարութեան, որ ուսուցիչները ազատ լինեն զինուորագրութիւնից, նոյնպիսի դիմումն արել է զինուորական նախարարութեան դպիրների համար։

Երուսաղեմայ գործեր.

Տաճկաստանում եկեղեցիների կալուածները գրուում են որ և է անուամբ, օր. Մարիամանա, Յակոբ Զեբեթեան։ Այս հանգամանքը լաւ յայտնի պէտք է լինի թուրքաց կառավարութեանը, սակայն կառավարութիւնը եդի գուլէի Երուսաղէմական կալուածքը, որ 40000 ոսկի արժէ, գրաւում է, առարկելով, որ այդ կալուածքը Յակոբը վարդապետ Շահ-բաղլեանին է, և որովհետև Շահ-բաղլեանն արդէն վախճանուած է, ուրեմն կալուածքը իբրև մահվիլ

(անտէր) տէրութեան պէտք է հանի։ Այս առարկութեամբ կառավարութիւնը գրաւել էր Սսի վանքին պատկանող թլանի կալուածքը, որ գրուած էր Սսի հանգուցեալ Մկրտիչ կաթուղիկոսի անունով. սակայն եթէ նախկին բռնապետութեան օրով հնար եղաւ յետ ստանալ այդ կալուածքը, այժմ, սահմանադրական կառավարութեան ժամանակ պէտք է անյոյս չլինել։ Պատրիարքարանը գրով և բանիւ դիմումներ արել է ում անկէ։

Ս. Պատրիարքը յայտնել է, որ եթէ ազգը բարոյական անուններով տակ անձեր է ներկայացնում, կառավարութիւն է պարտաւորեցնում այդպէս վարուելու։ Սեպհականութեան մի ուրիշ ապահով եղանակ թող ցոյց տրուի, բայց մինչև այդ՝ ազգը պէտք է իւր իրաւունքին տէր լինի ինչպէս ուրիշ ազգերն են։ «Վարչութիւնը ամեն ազգաւ միջոց պէտք է գործադրի այս սկզբունքի խնդիրը փրկելու համար», ասում է Բիւզանդիոնը։

Երուսաղէմի պատր. տեղապահը հաղորդել է որ «Վուսաւորեայի» հանդէսը առանց որ և է միջնադէպի է անցել։

Ծ. Դանիէլ Ծ. վարդապետը կամեցել է հրաժարուել Երուսաղէմի պատ. տեղապահութիւնից իբրև Ադրիանոպոլի եպիսկոպոս ձեռնադրուելու համար. բայց Վեհ. Հայրապետը յայտնել է, որ նա եպիսկոպոս ձեռնադրուելով պէտք է վարի Երուս. պատր. տեղապահի պաշտօնը։

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Սուլթանը հաստատել է նորընտիր Պօղոս եպիսկոպոս Թերզեանին հայ կաթոլիկների պատրիարք կաթուղիկոս։